

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/8**

**27 դեկտեմբերի 2013 թ.**

Քննարկվեց <Արայ> ՍՊԸ 20.12.2013 թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 20.11.2013 թ-ի թիվ 1000174 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ <Արայ> ՍՊԸ 20.12.2013 թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.05.2011 թ-ի թիվ 1000174 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Արայ> ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 20.11.2013 թ-ի թիվ 1000174 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

<Արայ> ՍՊԸ կողմից 20.12.2013 թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել վարչական բողոք ստուգման ակտի 1-ին, 3-րդ, 5-րդ և 15-րդ մասերը անվավեր ճանաչելու մասին: Միևնույն ժամանակ, <Արայ> ՍՊԸ կողմից 05.12.2013 թ-ին հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան, որով խնդրվել է անվավեր ճանաչել ստուգման ակտի 1-ին, 3-րդ, 5-րդ և 15-րդ մասերը:

ՀՀ վարչական դատարանը 12.12.2013 թ-ին կայացրել է թիվ ՎԴ/11476/05/13 որոշումը, որի համաձայն <Արայ> ՍՊԸ-ի հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <դ> ենթակետի. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ>:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. <Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է>:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <դ> ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ <Արայ> ՍՊԸ 20.12.2013 թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

<Արայ> ՍՊԸ-ի 20.12.2013 թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**